ՀԱՇՎԱՊԱՀԻ ԵՎ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԱՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՀԱՅԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Հաշվապահություն մասնագիտությունը և այդ մասնագիտությանը բնորոշ սկզբունքների հիման վրա հաշվետվություններ պատրաստելը ունի դարերի պատմություն: Բայց պետք է նշել, որ կազմակերպությունների գործունեության կայունության, աուդիտի և հաշվապահության փոխկապակցվածության վերաբերյալ ուսումնասիրությունները բավականին սակավաթիվ են: Ներկայումս կարծես թե ապացուցման կարիք չունի այն փաստը, որ մարդկության գործունեությունն իր ուրույն հետքն է թողնում երկրի վրա: Հաշվապահության լեզվով ասած՝ մենք ապրում ենք՝ գերազանցելով մեր իսկ եկամուտները, վատնելով կուտակված կապիտալը: Կապիտալի հետագա կորուստների սահմանափակման ուղիներից մեկը կայունություն կամ կայուն գործունեություն ապահովելն է: Կայուն սպառումը, կայուն զարգացումը, կայուն ներդրումների աճ ապահովելը հնարավորություն են տալիս սահմանափակելու կապիտալի հետագա կորուստները: Յուրաքանչյուր հաջորդ տարվա անկայուն ապրելակերպը նվազեցնում է երկարաժամկետ կայունության ապահովման հեռանկարը: Ժամանակակից տնտեսությունում բիզնեսի կայուն աճը համարվում է կարևորագույն մարտահրավերներից մեկը: Դեռևս վերջնականապես լուծված չեն բիզնեսի կայուն աճը ապահովող բոլոր հարցերը, և սահմանված չեն այն չափելու հնարավոր պարամետրերը: Միևնույն ժամանակ, բոլորին էլ պարզ է, որ գործ ունենք բազմակողմ խնդրի հետ: Ներկայումս բիզնեսի տնտեսական կայուն աճի ապահովումը մտահոգում է բիզնեսի և հասարակության բազմաթիվ ներկայացուցիչների: Բիզնեսի կայունության համար անհրաժեշտ է, որ ռեսուրսները և դրանց գները ևս լինեն կայուն, իսկ դրա ապահովումը բավականին բարդ խնդիր է: Գոյություն ունի ուղիղ համեմատական կապ գործունեության կայունության և կազմակերպությունների կողմից ներկայացվող հաշվապահական տեղեկատվության միջև: Կայուն կազմակերպությունները կարող են հաջողության հասնել՝ պայմանավորված այն բանով, թե ինչպես են նրանք օգտագործում և տրամադրում հաշվապահական տեղեկատվությունը: Կայունության ապահովումը ներառում է խնդիրների լուծում ոչ միայն ֆինանսական հաշվետվողականության և աուդիտի, այլև կորպորատիվ կառավարման, կառավարչական հաշվառման առումով[1]: Չնայած խնդրի արդիականությանը՝ ներկայումս ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները սահմանող մարմինը՝ Հաշվապահական միջազգային ստանդարտների խորհուրդը, հստակ չի սահմանել, թե կայունությանը վերաբե-

[1] Տե՛ս **Hans Newlands,** Sustainability in Auditing, The IIA Research Foundation, 2009:

րող տեղեկատվությունը ինչպես պետք է ներառվի ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում[2]: Գոյություն ունեն մասնագիտական միջազգային տարբեր մարմինների մի շարք առաջարկներ որոնք, սակայն, ոչ թե պարտադիր, այլ խորհրդատվական բնույթի են:

2008 թ.-ին Միավորված ազգերի կազմակերպության Առևտրի և զարգացման գործակալությունը կատարել է կազմակերպությունների գործունեության կայունությունը ապահովելու մասին հետազոտություն, որտեղ սահմանվում են այն ցուցանիշները, որոնց վերաբերյալ բացատրությունները միջազգային մասնագետների աշխատանքային խումբը առաջարկում է ներառել տարեկան ֆինանսական հաշվետվություններում[3]: Դրանք են՝ եկամուտների, ներմուծման և արտահանման, նոր ներդրումների, տեղական գնումների ծավալները, աշխատակիցների հետ պայմանագրերի, ըստ սեռի ու պայմանագրի տեսակի՝ աշխատավարձերի և կոլեկտիվ պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը, հետազոտության ու զարգացման, աշխատողի վերապատրաստման, աշխատակիցների անվտանգության և առողջության համար կատարած ծախսերը, հարկերը և սոցիալական վճարները, տույժերը և տուգանքները:

Կազմակերպության եկամուտների մասին տվյալները անհրաժեշտ են պարզելու համար, թե որքանով է կազմակերպությունը նպաստում ընդհանուր տնտեսության զարգացմանը, և, փաստորեն, բացահայտում են կազմակերպության տնտեսական կարևորության աստիճանը: Ներմուծման և արտահանման ցուցանիշները ցույց են տալիս կազմակերպության ազդեցությունը երկրի վճարային հաշվեկշռի տվյալների վրա: Ակնհայտ է, որ նոր ներդրումները կարող են ունենալ ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական ազդեցություն՝ ավելացնել արտադրության ծավալները, նվազեցնել գործազրկության և աղքատության մակարդակը: Տեղական գնումները իրենց հերթին ազդում են ավելացված արժեքի հարկերի ավելացման և զբաղվածության աճի վրա: Աշխատողների քանակի և սեռի վերաբերյալ տվյալները բացահայտում են կազմակերպության քաղաքականությունը աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ: Աշխատավարձերի և սոցիալական վճարների վերաբերյալ տեղեկատվությունը ևս բացահայտում է սոցիալական խնդիրների լուծմանը կազմակերպության ներգրավվածության աստիճանը:

Նշված տեղեկատվությունը և տարեկան հաշվետվությունները կայունության վերաբերյալ հաշվետվության կարևորագույն բաղկացուցիչներից են: Կայունության վերաբերյալ հաշվետվության նպատակը կազմակերպության կայուն զարգացմանը միտված գործունեությունը ներկայացնելն ու գնահատելն է: Ինչպես աուդիտի ստանդարտներում, այնպես էլ կայունության վերաբերյալ հաշվետվությունը կազմելիս կարևորագույն գործոն պետք է հանդիսանա էականությունը: Հաշվետվություն ներառվող տեղեկատվությունը պետք է բացահայտի կազմակերպության դերը, կարևորությունը տնտեսական և սոցիալական խնդիրները լուծելիս, ինչպես նաև էա-

[2] Տե՛ս "International Financial Reporting Standards, International Accounting Standards Board", www.iasb.org

[3] Տե՛ս "ISAR Intergovernmental Working Group of Experts on International Standards of Accounting and Reporting", Guidance Corporate Responsibility Indicators in Annual Reports, 2008, UNCTAD:

կան դեր ունենա բաժնետերերի կողմից որոշումներ կայացնելիս: Հաշվետվությունը պետք է պարունակի տեղեկատվություն բաժնետերերի սպասումների վերաբերյալ և բացահայտի, թե որքանով են այդ սպասումները իրականացվել: Այս հաշվետվությունը փաստորեն ներկայացնում է կազմակերպության իրականացրած քայլերը կայուն զարգացման ուղղությամբ: Այն պետք է լինի ամբողջական, ժամանակին, պարզ և պատշաճ կազմված: Ակնհայտ է, որ հաշվետվությունը կարող է համարվել արժանահավատ միայն այն դեպքում, երբ այն ստուգվի և հավանության արժանանա աուդիտորի կողմից: Կայունության ապահովման գործում էական է աուդիտորի ճիշտ և ժամանակին եզրակացությունը: Աուդիտորական գործունեության ստանդարտացումը կարևոր նախապայմաններ է ստեղծել տնտեսության և բիզնեսի կայուն զարգացման համար: Պրոֆեսիոնալ հաշվապահի ժամանակակից դերը բավականին կարևորվում է կազմակերպության կայուն զարգացումը ապահովելու գործում: Ներկայումս պրոֆեսիոնալ հաշվապահը մատուցում է ոչ միայն հաշվապահական հաշվառման ծառայություններ, այլև ֆինանսական հաշվետվությունների աուդիտի առաքելության մեջ ներգրավվելով՝ իրականացնում է հարկերի հաշվառում և անհրաժեշտության դեպքում մատուցում է խորհրդատվական կամ նմանատիպ այլ մասնագիտական ծառայություններ[4]: Կայուն զարգացման համար օրեցօր աճող պահանջներն ի հայտ են բերում պրոֆեսիոնալ հաշվապահի կողմից իրականացվող նոր գործառույթներ: Հաշվապահների միջազգային դաշնության՝ բիզնեսի կայուն զարգացման համար առանձնացված յոթ հիմնական գործոնները մատնանշում են այն հիմնական ուղղությունները, որոնց իրագործմանը պետք է էական աջակցություն ցուցաբերի հաշվապահություն և աուդիտ մասնագիտությունը՝ ապահովելով կազմակերպությունների գործունեության կայուն զարգացումը: Դրանք են՝

1. հաճախորդների և շահառու կողմերի պահանջների բավարարմանն ուղղված գործունեություն,
2. արդյունավետ կառավարման ռազմավարության ճիշտ իրականացում,
3. ռիսկերի կառավարում և վերահսկողություն,
4. նորարարության ներմուծում և ճկունության ապահովում,
5. ֆինանսների կառավարում,
6. մարդկային ռեսուրսների կառավարում և տաղանդների բացահայտում,
7. արդյունավետ և թափանցիկ փոխհարաբերությունների հիմնում:

Կազմակերպության հիմնական գործունեությունը միտված է սպառողների պահանջները բավարարելու համար անհրաժեշտ ապրանքներ և ծառայություններ ստեղծելուն: Սպառողների պահանջարկի բավարարումը իր հերթին հնարավորություն է ընձեռում բավարարելու բաժնետերերի պահանջները: Կայուն գործունեության համար էական է սպառողների պահանջների բավարարմանը միտված քաղաքականության իրականացումը, բայց միևնույն ժամանակ կարևոր է այդ քաղաքականությունը իրականացնել շուկայական փոփոխություններին համընթաց: Նշվածը բնորոշ է ոչ միայն շահույթ հետապնդող կազմակերպություններին, այլև շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություններին: Կայունություն ա-

[4] Տե՛ս «Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագիրք». Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա, Եր., 2009:

պահովելու համար անհրաժեշտ է ճիշտ կազմակերպել և իրականացնել նոր արտադրություն ու ծառայություն պլանավորումից մինչև արտադրանքը կամ ծառայությունը իրացնելու բոլոր գործառույթները: Այս ամենը կարող է արդյունավետորեն իրականացվել, եթե ֆինանսական որոշումները և հաշվապահությունը աջակցում են հաճախորդի պահանջները բավարարելուն նպաստող որոշումների կայացմանը:

Հաճախորդներին և շահառու կողմերի պահանջները բավարարելուն միտված գործունեությանը աջակցելու համար հաշվապահը պետք է մասնակցի դեպի կազմակերպություն հաճախորդներ ներգրավելու գործառույթներին, նպաստի կազմակերպության գործունեության վերաբերյալ ճիշտ կարծիքի, ինչպես նաև անհրաժեշտ ֆինանսների ձևավորմանը:

Համաշխարհային ժամանակակից տնտեսությունում, երբ ժամ առ ժամ ի հայտ են գալիս նոր տեխնոլոգիաներ, ուշադրության կենտրոնում պահելով հաճախորդների և շահառու կողմերի պահանջների բավարարումը՝ հնարավորություն է ստեղծվում հօգուտ հաճախորդների կայացնելու ապակենտրոնացված որոշումներ և աջակցելու նորարարությունների ներմուծմանը՝ շահառու կողմերի միջև կառուցողական փոխհարաբերություններ հիմնելու նպատակով: Հաշվի առնելով հաշվապահի հնարավորությունները կազմակերպության ներսում նման խնդիրները լուծելու առումով՝ որոշվում է նաև նրա դերը կազմակերպության շրջանակներում: Հաշվապահը կարող է անհրաժեշտության դեպքում տրամադրել ինչպես սպառողներին, այնպես էլ շահառու այլ կողմերին որոշումներ կայացնելու համար խիստ անհրաժեշտ տեղեկատվություն: Հաշվապահի և աուդիտորի գործունեությունը կարող է էապես օգնել այնպիսի գործառույթների իրականացմանը, ինչպիսիք են նորարարությունների ներդրումը և վաճառքի ծավալների ավելացումը:

Կազմակերպության կայուն գործունեության կարևորագույն գործոններից մեկն էլ, որից բխում է նաև այլ խնդիրների իրականացումը, արդյունավետ կառավարումն է, որի համար պետք է խորությամբ հասկանալ սպառողների և շահառուների պահանջները, անհրաժեշտ ապրանքներ և ծառայություններ ստեղծելու կազմակերպության հնարավորությունները, ինչպես նաև շուկայի հնարավորությունները և վտանգները: Արդյունավետ կառավարման շնորհիվ ստեղծվում է մի միջավայր, որտեղ կազմակերպության համապատասխան աշխատակիցները հնարավորություն են ստանում ձեռք բերելու գիտելիքներ և փորձ, այնուհետև դրանք կիրառելու պրակտիկայում ավելի արագ, քան մրցակիցները: Հաշվապահը կարող է աջակցել արդյունավետ կառավարում և ռազմավարություն իրականացնելուն՝ գնահատելով ռազմավարության իրականացման հնարավորությունները, այնուհետև տրամադրելով պահանջվող ֆինանսական տեղեկատվությունը որոշումներ կայացնելու համար:

Ռիսկերի կառավարումը և վերահսկողությունը կազմակերպության կայուն գործունեության կարևորագույն նախապայմաններից են: Կազմակերպության գործունեության կայունության բարձր մակարդակ հնարավոր է ապահովել՝ ցանկացած տեսակի գործունեությունում ներառելով ռիսկերի կառավարման և վերահսկման մեխանիզմներ: Պրոֆեսիոնալ հաշվապահը պետք է աջակցի ռիսկերի կառավարման և վերահսկողության արդյունա-

վետ իրականացմանը: Որպես միջնորդ՝ հաշվապահը պետք է համոզվի, որ ռիսկերի կառավարման և վերահսկողության համակարգերը նպաստում են կազմակերպության ռազմավարական նպատակների իրականացմանը և ապահովում են ֆինանսական հաշվետվողականության նկատմամբ պատշաճ ներքին վերահսկողություն: Այստեղ ի հայտ է գալիս հաշվապահի կողմից իրականացվող ևս մեկ գործառույթ. այն է՝ կազմակերպության հնարավորությունների և ռիսկերի միջև հավասարակշռության ապահովումը:

Կայուն կազմակերպությունները սովորաբար պետք է ունենան շուկայի փոփոխվող պահանջներին համապատասխան նորարարության և հարմարվողականության հնարավորություններ: Դա ներառում է մատուցվող ծառայությունների և վաճառվող ապրանքների շարունակական բարելավում, ինչպես նաև՝ անհրաժեշտության դեպքում կառուցվածքային փոփոխությունների պատրաստակամություն: Նորարարության ներմուծումը կարող է լինել փուլային, որը թույլ կտա շարունակաբար բարելավել ծառայությունները և ապրանքները, կամ էլ՝ «պայթյունային», որի դեպքում նորարարության ներմուծումը փոխում է շուկայի կառուցվածքը և մրցակցային պայմանները: Նորարարություններին արդյունավետորեն նպաստելու համար հաշվապահը պետք է կարողանա գնահատել նորարարության հնարավոր ազդեցությունը, աջակցել ֆինանսական և հաշվապահական գործառույթների իրականացմանը նորարարությունների ներմուծման ժամանակ: Նորարարության գնահատումը ենթադրում է նաև դրա վերաբերյալ ֆինանսական հաշվետվություններում, ինչպես նաև կից բացատրություններում համապատասխան թվային տվյալների և մեկնաբանությունների ներկայացում: Հաշվապահը, ներքին աուդիտորը պետք է ներգրավված լինեն նորարարության ներդրման բոլոր փուլերում՝ այլընտրանքների դիտարկման, պլանավորման, ապրանքների և ծառայությունների իրացման և այլն: Պետք է վստահ լինել, որ նորամուծությունները բավարար խորությամբ հետազոտված են, բավարարում են սպառողների պահանջմունքները և արդյունավետորեն կարող են ներդրվել կազմակերպության գործունեության մեջ:

Կազմակերպության կայուն գործունեություն ապահովելու համար խիստ կարևոր է ունենալ ուժեղ ֆինանսական կառավարում, որը կապահովի որոշումների ժամանակին իրագործումը, կապահովագրի բիզնեսը շուկայի հնարավոր վտանգներից և կկարողանա օգտագործել եղած հնարավորությունները: Կազմակերպության ֆինանսական կարողությունը էապես կախված է ներդրումների ծավալից, որի շնորհիվ հնարավորություն է ստեղծվում լուծելու տնտեսական և սոցիալական բազմաթիվ հարցեր: Արդյունավետ ֆինանսական կառավարումը հնարավորություն է ստեղծում ապահովելու երկարաժամկետ կայունություն և կայուն զարգացման հնարավորություն: Ինչպես մակրոմակարդակում, այնպես էլ միկրոմակարդակում ֆինանսների կառավարման ռազմավարական նպատակը երկարաժամկետ տնտեսական աճի ապահովումն է: Կայուն կազմակերպությունները սովորաբար ունենում են ապագա գործողությունների, ֆինանսների պլանավորման և կանխատեսումների բավականին լավ զարգացած համակարգ, որը հնարավորություն է ստեղծում ապահովելու ծախսերի, հարկերի, շահութաբերության անհրաժեշտ մակարդակ: Այն նպաստում է ֆինանսական կապիտալի կուտակմանը և նոր աղբյուրներից օգտվելու հնարավորությունների ընդլայնմանը: Ինչպես

հաշվապահի, այնպես էլ աուդիտորի կարևորագույն գործառույթներից մեկն էլ ֆինանսների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ աջակցության ապահովումն է: Այն ներառում է ֆինանսական նպատակների և ռազմավարության իրականացման, ֆինանսական պլանավորման և կապիտալ ներդրումների պահանջների ապահովման, ինչպես նաև ֆինանսական հաշվետվողականության պատշաճ կազմակերպման աջակցություն: Թվարկածը կարելի է ավելի մանրամասնել՝ ներառելով որոշումների կայացման համար ղեկավարությանը տրամադրվող ֆինանսական տեղեկատվության մշակում և վերլուծություն, ֆինանսական վերահսկողության, բյուջետավորման և ֆինանսական պլանավորման ու ռիսկերի կառավարման գործառույթների իրականացման ապահովում: Ֆինանսական արդյունավետ կառավարումը հնարավորություն կտա նաև ժամանակին բացահայտելու ընթացիկ, գործառնական բնույթի բազմաթիվ հարցեր, որոնց ճիշտ լուծումը պայմաններ կստեղծի նվազեցնելու գործառնական ծախսերը:

Համաձայն Վաթսոն Վիաթի՝ մարդկային կապիտալի վերաբերյալ ուսումնասիրությունների՝ մարդկային ռեսուրսների ճիշտ կառավարումը նպաստում է ավելացնելու ոչ միայն կազմակերպության շահութաբերությունը, այլև բիզնեսի արժեքը[5]: Կայուն կազմակերպությունները մարդկային կապիտալը, առավել ևս տաղանդավոր մարդկանց բացահայտումը սովորաբար դիտում են որպես ռազմավարական նպատակ և կազմակերպության հաջողության հիմնական գրավական: Վերջին ժամանակաշրջանում դրանք ավելի կարևոր նշանակություն են ձեռք բերել, քանի որ շատ շուկաներում նկատվում է որակավորված մասնագետների առաջարկի նվազում: Այդ պայմաններում մեծանում է մրցակցությունը, և աճում է բարձր որակավորում ունեցող մասնագետների պահանջարկը: Մարդկային կապիտալի ճիշտ կառավարումը և տաղանդների բացահայտումը կարևոր են նաև կազմակերպության ֆինանսական գործառույթների բարելավման համար: Հաշվապահի և աուդիտորի մասնագիտությունը ներկայումս կրում է գլոբալիզացիայի և տնտեսական փոխկապակցվածության աճի բազմաբնույթ ազդեցությունը, որը բնութագրվում է հաշվապահի և աուդիտորի մասնագիտական գործունեության մրցակցային գլոբալ շուկայի ստեղծմամբ: Նման պայմաններում խիստ կարևոր է, որ կազմակերպության ֆինանսները տնօրինեն համապատասխան փորձ և գիտելիքներ ունեցող մարդիկ: Մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարմանը աջակցելու համար պրոֆեսիոնալ հաշվապահը պետք է նպաստի ֆինանսական այնպիսի գործառույթների իրականացմանը, օրինակ՝ աշխատավարձների վճարում և այլն, որոնք հնարավորինս բացահայտում են որակյալ մասնագետների առավելությունները և նպաստում են այլ մասնագետների մեջ համապատասխան մոտիվացիա ձևավորելուն:

Ակնհայտ է, որ կազմակերպության կայունության համար պետք է որդեգրել հստակ ռազմավարություն, որը իրագործելու համար անհրաժեշտ են համապատասխան բիզնես և գործառնական ծրագրեր: Դրանց արդյունավետ իրագործումը մեծապես նպաստում է ռազմավարական ծրագրերի իրականացմանը: Կազմակերպության կայունության համար անհրաժեշտ է,

[5] Տե՛ս **Watson Wyatt,** Human Capital Index: Human Capital as a Lead Indicator of Shareholder Value, 2002:

որ ցանկացած տեսակի ռեսուրսների օգտագործումը լինի ռազմավարական նպատակներին համապատասխան, իսկ գործունեության գնահատականը և ֆինանսական հաշվետվությունները փաստեն ռազմավարական և գործառնական նպատակներին հասնելու առաջընթացը: Դրա համար ֆինանսական տեղեկատվությունը պետք է նպաստի շահառուների միջև առողջ փոխհարաբերությունների կայացմանը: Հաշվապահը չի կարող պատշաճ մակարդակով տրամադրել ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվություն այն դեպքում, երբ չի հասկանում կազմակերպության ռազմավարական նպատակները: Ուստի կարևոր է, որ ֆինանսական հաշվետվությունները պարունակեն պատշաճ տեղեկատվություն, որը կնպաստի կազմակերպության գործունեության շարունակական բարելավմանը:

Հաշվապահի մասնագիտական գործունեությունը պետք է նպաստի նաև կազմակերպության գործունեության թափանցիկության և հեղինակության ավելացմանը: Ժամանակակից բիզնեսում տեղեկատվության թափանցիկության հարցերը շատ են կարևորվում, քանի որ գլոբալիզացիայի և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ գոյություն չունի աշխարհագրական որևէ սահմանափակում կազմակերպության բաժնետերերի գտնվելու և կազմակերպության բուն գործունեության իրականացման վայրերի միջև: Միևնույն ժամանակ ավելացել է նաև պահանջարկը կազմակերպության հաշվապահական տեղեկատվության որակի և ծավալի նկատմամբ: Բաժնետերերը ակնկալում են ստանալ ոչ միայն արխիվային և ընթացիկ, այլև կանխատեսվող տեղեկատվություն կազմակերպության գործունեության վերաբերյալ: Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները պետք է շահառու բոլոր խմբերի համար լինեն պարզ և հասկանալի: Ուստի շատ կարևոր է, որ ինչպես հաշվապահական, այնպես էլ աուդիտորական ստանդարտները տարբեր երկրներում լինեն միանման:

АЙК МНАЦАКАНЯН – ***Современные функции бухгалтера и аудитора в обеспечении стабильности предприятия.*** – Вопросы, связанные с устойчивым развитием бизнеса, остаются во многом трудными для понимания. Ещё не предприняты достаточные меры для их решения. Очевидно, что часть этих вопросов предстоит решить профессиональным бухгалтерам и аудиторам. Повышению их роли в достижении долгосрочной экономической устойчивости бизнеса и посвящена статья.

HAYK MNATSAKANYAN – ***Modern Functions of the Accountant and Auditor in Ensuring the Stability of the Organization.*** – Nowadays economy has identified sustainable development as a major challenge. The issues surrounding sustainable business development remain largely difficult to understand, and the majority of measures have not yet been undertaken. On the other hand, everyone now recognizes that we are dealing with a very complex problem. It is obvious that part of this problem should be solved by professional accountants and auditors. In this article we discuss the issues on enhancement of the role of the accountant and auditor for achieving long-term business sustainability.